

## ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

### ԻՐԱԿԼԻ ԴԱՐԻՔԱՇՎԻԼԻ. «ԿՈՆԿՐԵՏ ԽՆԴԻՐՆԵՐԻՅ ՄԵԿՆ ԱՅՆ Է, ՈՐ 2030 ԹՎԱԿԱՆԻՆ ՎՐԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՍԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՐՃ ԽՈՍԵՆ ՎՐԱՉԵՐԵՆ»

Օգոստոսի 3-ին, Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիքաշվիլին՝ երկրի զարգացման 10-ամյա ծրագրի ներկայացման շրջանակներում, անցկացվեց Վրաստանի Հանրապետության կառավարության հարցերով պետական տնտեսական գործունեության 10-ամյա ծրագրի շնորհանդեսը:



(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

Իր խոսքում Իրակլի Դարիքաշվիլին, ընդգծելով քաղաքացիական ինտեգրման ուղղությամբ իրականացվող և իրականացվելիք ծրագրերի կարևորությունը, առանձնակի կանգ առավ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին երկրի հասարակական և քաղաքական կյանքում ակտիվ ներգրավման հարցին՝ նշելով, որ դրա կարևորագույն նախադրյալը պետական լեզվին լիարժեք տիրապետումն է:

## ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

### ՍԱԼՈՍԵ ԶՈՒՐԱՔԻՇՎԻԼԻ. «ՈՉ ՈՔ ԶՊԵՏՔ Է ԿԱՐՈՂԱՆԱ ՎՆԱՍԵԼ ՄԵՐ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՈՒՂՈՒՆ»



Օգոստոսի 3-ին Վրաստանի նախագահ Սալոսե Զուրաքիշվիլին, ստորագրելով ընթացիկ տարվա հոկտեմբերի 2-ին տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների անցկացման մասին հրամանագիրը, հանդես եկավ հատուկ հայտարարությամբ: Երկրի նախագահը ներկայացրեց իր դիրքորոշումը Եվրոպայի խորհրդի նախագահ Շառլ Միշելի միջնորդությամբ ապրիլի 19-ին ձեռնարկված համաձայնագիրը, համաձայնագրով կառավարող և ընդդիմադիր կուսակցությունների ստանձնած պարտավորությունների կատարման անհրաժեշտությանը, ընդդիմադիր առանձին կուսակցությունների կողմից համաձայնագրին չմիանալուն, արդյունքում, կառավարող թիմի կողմից համաձայնագրի չեղարկման, հոկտեմբերի 2-ին անցկացվելիք ընտրությունների հարցում:

«ՀԱՍԱԶԱՅՆ ԶԵՄ ԻՇԽՈՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՐՅԱՎԱՆԻՆ, ԹԵ ԲԵՎԵՌԱՑՈՒՄԸ ԶԻ ՆՎԱԶԵԼ»  
Ես համաձայն չեմ իշխող կուսակցության գնահատականին, թե բեռնացույց չի նվազել, ինչով բացատրում է փաստաթղթի չեղարկումը, - հատուկ հայտարարության մեջ նշեց Վրաստանի նախագահ Սալոսե Զուրաքիշվիլին:  
(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

## ՏԵՂԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### ԳԻՈՐԳԻ ԿԱԼԱՆԴԱՐԻՇՎԻԼԻՆ՝ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Օգոստոսի 2-ին Վրաստանի խորհրդարանն արդեն չորրորդ անգամ ձեռնամուխ եղավ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի և հանձնաժողովի անդամների ընտրության քննարկմանը: Զորքորդ քննարկմանը, խորհրդարանը՝ 83 կողմ և 3 դեմ ձայնով, վեց ամիս ժամկետով ԿԸՀ-ի նախագահ ընտրեց Գիորգի Կալանդաշվիլին: Միաժամանակ, պատգամավորների որոշմամբ, ԿԸՀ անդամներ են դարձել Գիա Յացաշվիլին և Մայա Ջարիձեն: (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

## «ՎՐԱՍՏԱՆԸ» 100 ՏԱՐԵԿԱՆ Է

ՀՈՔԵԼՅԱՆԴ ԲԱՐԻ, «ՎՐԱՍՏԱՆ»



ՍԱՐԻՆԱ ԹԵՔՅՈՒՄԱՆԻՉԵ

ՅՈՒՆԵՍԿՈՒԻ ՇՆՈՐՀԱՎՈՐ, ԲԱՐԻ ՀԻՇՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՔՅՈՐ  
Չեռքս են առնում «Վրաստան» թերթի հերթական համարը: Այգրեսի առաջ հայտնվում է Լուսահոգի տատի սպասողական հայացքը: Ամեն ուրբաթ օր, տան շենքին դիմավորում էր դարոցից վերադարձող հորս ու հարցում. «Գազեք փերե՞լ ես» ու, չսպասելով պատասխանի, բացում էր թղթապանակը: Մի տարի է տատս չկա, բայց մենք չենք դադարում սպասել «գազեքին»:



ԱՐՄԵՆՈՒԻ ԴՈՂՈՍՅԱՆ

Թանկագին վան, սիրելի «վրաստանցիներ»: Ի սրտե շնորհավորում եմ Վրաստանի հայալեզու պարբերականի «Վրաստան» թերթի մեկուկուսուկուս հոբելյանը: Միանգամից ասեմ, որ միայն ազգային բազմերանգության ու հանդուրժողականության ջերմ մթնոլորտ Վրաստանում է հնարավոր ոչ պետական լեզվով թերթի հարյուրամյա արդյունավետ գործունեությունը ու առաջընթացը: Եվ ի պատիվ «վրաստանցիների» միմյանց հաջորդող սերունդների, կարելի է վստահությամբ ասել, (Շարունակությունը՝ 5-րդ էջում)

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)

## ՀԱՅԱՍՏԱՆ

### ՈՒԹԵՐՈՐԴ ԳՈՒՄԱՐՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԸ ՍԿՍԵՑ ԱՇԽԱՏԱՆՔԸ

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՔԸ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՍՏԱՆԱԳՐՈՎ ՆԻԿՈՒ ՓԱՇԽԵՅԱՆԸ ՆՇԱՆՍԿՎԵՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏ

Օգոստոսի 2-ին անցկացվեց Հայաստանի ութերորդ գումարման Ազգային ժողովի անդրանիկ նիստը: Այն սկսվեց Տերունական աղոթքով, որը հնչեցրեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսը:

Նիստը ամենատարեց պատգամավորի կարգավիճակով բացեց «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունից ԱԺ պատգամավոր Կնյազ Հասանովը: (Շարունակությունը՝ 7-րդ էջում)

## ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

### ԻՐԱԿԼԻ ԴԱՐԻՔԱՇՎԻԼԻՆ ՇՆՈՐՀԱՎՈՐԵՒ Է ՆԻԿՈՒ ՓԱՇԽԵՅԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏ ՆՇԱՆՍԿՎԵԼՈՒ ՎՊԱԿՈՒԹՅԱՔ



Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիքաշվիլին շնորհավորական ուղերձ է հղել Նիկոլ Փաշինյանին Հայաստանի վարչապետի պաշտոնում նշանակվելու կապակցությամբ:

Ուղերձում ասված է. «Թույլ տվեք անկեղծ շնորհավորել Հայաստանի Հանրապետության վարչապետի պաշտոնին նշանակվելու կապակցությամբ: Տարածաշրջանի աշխարհաքաղաքական դիմադրական և առկա մարտահրավերները ավելի նշանակալից են դարձնում մեր երկրների միջև համագործակցությունը ինչպես երկկողմ, այնպես էլ տարածաշրջանային ձևաչափում: Հավատում եմ, որ Վրաստանի և Հայաստանի Հանրապետության միջև դարերի ընթացքում ձեռնարկված սերտ կապերն ու ավանդական բարիդրացիական հարաբերություններն ապագայում ավելի կամրապնդվեն: Ցանկանում եմ պատրաստակամություն հայտնել ակտիվ երկխոսության համար այս փոխշահավետ համագործակցության է՛լ ավելի ամրապնդման գործում: Չերդ Գերազանցություն, ցանկանում եմ նաև մեկ անգամ հավաստել իմ խորին հարգանքը եւ մաղթել Ձեզ եւ եղբայրական հայ ժողովրդին խաղաղություն և բարություն»:

### ԿԱՅԱՑԱԿ ԳԻՈՐԳԻ ՍԱԳԱՆԵԼԻՉԵԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՀԵՏ

Օգոստոսի 6-ին Հայաստանում Վրաստանի արտակարգ և լիազոր դեսպան Գիորգի Սագանելիձեն, Հայաստանում դիվանագիտական առաքելությունը ավարտելու կապակցությամբ, հանդիպում ունեցավ Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանի հետ:



Հանդիպմանը Արմեն Սարգսյանը շնորհակալություն հայտնեց Գիորգի Սագանելիձեի բարեկամ երկու երկրների միջև հարաբերությունների շարունակական զարգացման գործում ունեցած ներդրման համար, և հետագա հաջողություններ մաղթեց: Արմեն Սարգսյանն ընդգծեց, որ երկու երկրների միջև բարձր մակարդակով փոխայցելությունները, բոլոր ուղղություններով համագործակցությունը խորացնելու երկկողմ ջանքերը հնարավորություն են տալիս հետևողականորեն ամրապնդել միջպետական հարաբերությունները եւ պահպանել ու խորացնել երկու բարեկամ ժողովուրդների միջև կապերը: Գիորգի Սագանելիձեն նշեց, որ ջերմ տպավորություններով է հեռանում Հայաստանից եւ շարունակելու է մնալ հայերի լավագույն բարեկամներից մեկը:





